ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 փետրվարի 2020 թվականի N 35 -Ա

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ, ՍԵՅՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԵՎ ԱՐԹՈՒՐ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2335-Ն և 2018թ. նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշումներով հաստատված կարգերով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական Գոռ Թադևոսյանին, ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Սեյրան Ավետիսյանին և քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Արթուր Արզումանյանին 1 օրով՝ փետրվարի 4-ին գործուղել Սիսիան համայնք՝ արտակարգ իրավիճակներում ֆիզիկական և իրավաբանական անձանց հասցված վնասի մարզային հանձնաժողովի աշխատանքային խմբի կողմից Բռնակոթ գյուղում հրդեհված տան վնասները ուսումնասիրելու նպատակով:

2.Մարզպետարանի սպասարկող անձնակազմի վարորդ Սեյրան Աղալոյանին՝ իրեն ամրակցված Հյունդայի Սոնատա (HYUNDAI SONATA) մակնիշի 421 ԼԼ 60 պետհամարանիշի ավտոմեքենայով ապահովել տրանսպորտային միջոցով սպասարկումը:

3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել գործուղման ծախսերի վճարումը:

4. Ս.Ավետիսյանին և Ա.Արզումանյանին գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:

2/4/2020

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020թ. փետրվարի 04